ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք. Հրազդան **07 փետրվարի 2022 թ.**

ՀՀ Կոտայքի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Պետրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայքի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված « Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» ծրագրով՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը ստանձնում է իրականացնել մշակութային միջոցառումների կազմակերպման պարտավորություն:

1.2 Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում, որը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայությունների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից կատարված Ծառայությունները չեն համապատասխանում սահմանված պահանջներին:

2.1.3 Չընդունել Ծառայությունների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.4 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու կատարված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել Ծառայությունների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի **2.1.2** կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի **2.1.3** կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1 Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիք և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և(կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերությունների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների գինը կազմում է 2009.7 (երկու միլիոն ինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը):

4.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատարողին վճարում է մշակութային միջոցառումների կազմակերպման ժամանակացույցի համաձայն՝ (հավելված) յուրաքանչյուր միջոցառման կազմակերպման համար նախատեսված գումարը առնվազն հինգ օր առաջ փոխանցելով Կատարողի հաշվարկային հաշվին:

4.3 **Կատարողի** կատարած Ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի մեկ տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողի վճարվելիք գումարներից:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ « ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները ուժի մեջ են մտնում ստորագրման պահից և գործում են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Կոտայքի մարզպետարան	« Կոտայքի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ
ք, Հրազդան Կենտրոն, վարչ. շենք	ք. Հրազդան, Կենտրոն 49
Հ/Հ 900121186036	Հ/Հ 900128000230
ՀՎՀՀ 03014577	ՀՎՀՀ 03008809
Հրազդանի ՏԳԲ	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պաշտոնակատար՝
---------- Լ. Պետրոսյան	---------- Ա. Սիմոնյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 07.02.2022 թ.
կնքված պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Գումարը՝ (հազ.դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված ասմունքի մանկապատանեկան մարզային մրցույթ-փառատոնով	Մարտ	550.0 ՀՀ դրամ	ՀՀ պետբյուջե
2.	«Կոտայք-2022» մարզային մշակութային փառատոն	Ապրիլ-մայիս	600.0	ՀՀ պետբյուջե
3.	Աշուղական երգի մարզային մրցույթ-փառատոն՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300- ամյակին	Սեպտեմբեր	350.0 հոկտեմ.	ՀՀ պետբյուջե
4.	Գեղանկարչության մարզային երիտասարդական ցուցահանդես	Հոկտեմբեր	509.7 նոյեմ.	ՀՀ պետբյուջե
	Ընդամենը		**2009.7**	ՀՀ պետ. բյուջե

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք, Հրազդան Կենտրոն, վարչ. շենք
Հ/Հ 900121186036
ՀՎՀՀ 03014577
Հրազդանի ՏԳԲ
Գլխավոր քարտուղար՝

Լ. Պետրոսյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կոտայքի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ
ք. Հրազդան, Կենտրոն 49
Հ/Հ 900128000230
ՀՎՀՀ 03008809

Տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Սիմոնյան

Կ.Տ